ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ունիվերսալ
վարկային կազմակերպություն փակ
բաժնետիրական ընկերության
միակ հիմնադրի՝
«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊ ընկերության
20.04.2018 թ. թիվ 01/18 որոշմամբ

«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ՈՒՎԿ ՓԲԸ

Հիմնադիր «ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ
լիազորված անձ
Խաչիկ Ներկարարյան

_____

(ստորագրություն)

Khachik Nerkararyan
Digitally signed by Khachik Nerkararyan
Date: 2018.07.04 13:47:49 +04'00'

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Արթուր Ջավադյան

Digitally signed by Arthur Javadyan
Date: 2018.07.09 11:11:14 AMST
Reason: Գրանցված է 22.06.2018թ.

_____

(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ունիվերսալ վարկային կազմակերպություն

փակ բաժնետիրական ընկերության

APPROVED by decision No 01/18 of 20.04.2018 of
"MIKRO KAPITAL" LLC, sole shareholder of
"MIKRO KAPITAL ARMENIA" universal credit organization
closed joint stock company

representative of founder "MIKRO KAPITAL" LLC
Khachik Nerkararyan

_____

(signature)

Khachik Nerkararyan
Digitally signed by Khachik Nerkararyan
Date: 2018.07.04 13:48:42 +04'00'

REGISTERED at the Central Bank

Chairman of the Central Bank of the RA
Artur Javadyan

CHARTER

"MIKRO KAPITAL ARMENIA" universal credit organization closed joint stock company

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ
4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՎԱԴՐՈՒՄԸ
5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ
6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ
7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. **«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ» ունիվերսալ վարկային կազմակերպություն** փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վարկային կազմակերպության գործունեության իրականացման միջոցով շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնետոմսերի:

1.2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, «Վարկային կազմակերպությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Ընկերության **ֆիրմային անվանումն** է

Հայերեն լրիվ/ In Armenial full:	**«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ»** ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն
Կրճատ/In short	**«ՄԻԿՐՈ ԿԱՊԻՏԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ»** ՈՒՎԿ ՓԲԸ
Ռուսերեն լրիվ/ In Russian full:	**«МИКРО КАПИТАЛ АРМЕНИЯ»** универсальная кредитная организация закрытое акционерное Общество
Կրճատ/In short	**«МИКРО КАПИТАЛ АРМЕНИЯ»** УКО ЗАО
Անգլերեն լրիվ/ In English full:	**«MIKRO KAPITAL ARMENIA»** universal credit organization» Closed Joint Stock Company
Կրճատ/In short	**«MIKRO KAPITAL ARMENIA»** UCO CJSC

CONTENT

1. GENERAL PROVISIONS
2. THE ACTIVITY AND FINANCIAL OPERATIONS OF THE COMPANY
3. THE STATUTORY CAPITAL OF THE COMPANY
4. THE ALIENATION AND PLEDGE OF THE COMPANY SHARES
5. THE MANAGEMENT BODIES OF THE COMPANY
6. THE ACCOUNTINGS, REPORTS AND FINANCIAL CONTROL OF THE COMPANY
7. FINAL PROVISIONS

1. GENERAL PROVISIONS

1.1. **"Mikro Kapital Armenia" universal credit organization** closed joint stock company (hereinafter – The Company) is a legal entity founded as a trade organization with a purpose of profiting from the activity of credit organization, the capital of which is divided into the shares with the amounts defined in this charter.

1.2. The company is governed by the civil legislation of the Republic of Armenia, RA law "On Credit organizations" and "On Joint-Stock Companies", other legal acts and this charter during its activity.

1.3. The Company **firm name** is:

1.4. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ **ՀՀ, Երևան, Պարոնյան 8 շենքի թիվ 1 տարածք:**

1.5. Ընկերությունը «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գրանցվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում (այսուհետ՝ ԿԲ): Գրանցվելու պահից Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ և ստանում է վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա:

1.6. Ընկերությունը ունի իր ֆիրմային անվանմամբ և խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր:

1.7. Ընկերության գործունեության ժամկետն անսահմանափակ է:

1.8. Ընկերության միակ հիմնադիրն ու բաժնետերն է հանդիսանում Լյուքսեմբուրգում գրանցված «Միկրո Կապիտալ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Ընկերության միակ բաժնետերն ունի «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով բաժնետիրոջ իրավունքները, ինչպես նաև իրականացնում է սույն կանոնադրությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված բաժնետերերի ժողովի իրավասությունները:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ընկերությունը որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է **վարկային կազմակերպության գործունեություն,** այն է՝ ներգրավվում է փոխառություններ և (կամ) կնքում Օրենքով սահմանված նմանատիպ գործարքներ և (կամ) տրամադրում վարկեր կամ կատարում Օրենքով սահմանված այլ ներդրումներ:

2.2. Ընկերությունը կարող է իրականացնել Օրենքով վարկային կազմակերպությունների համար սահմանված ֆինանսական գործառնություններ, ներառյալ՝

ա) ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ, բացառությամբ պարտատոմսերի և հրապարակային օֆերտաներով միջոցների ներգրավվման.

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

գ) տրամադրել երաշխիքներ.

դ) թողարկել արժեթղթեր, ինչպես նաև իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել.

1.4. The location and legal (postal) address of the Company is **premises 1, 8 building, Paronyan str., Yerevan, RA.**

1.5. The Company is registered in the Central Bank of the Republic of Armenia (hereinafter referred to as CB) as established by RA Law "On Credit organizations". The Company acquires the status of a legal entity and gets a credit organization activity license upon registration.

1.6. The Company has a round seal, stamps and blanks with the Company name and symbol.

1.7. The activity term of the Company is unlimited.

1.8. The only founder and shareholder of the Company is "Mikro Kapital" limited liability company registered in Luxemburg.

The only shareholder of the Company has rights of shareholder defined by RA law on Jont-Stock companies and implements the authorities defined by this charter or the shareholders' meeting defined by RA legislation and Charter.

2. THE ACTIVITY AND FINANCIAL OPERATIONS OF THE COMPANY

2.1. The Company implements **credit organization activity** as entrepreneurial activity, namely attracts loans and (or) concludes similar transactions defined by Law and (or) provides credits or makes other investments defined by Law.

2.2. The Company may implement the financial operations defined by the Law for the credit organizations, including:

a) to attract loans and (or) conclude similar transactions, except attraction of bonds and funds via public offers,

b) to provide credits, loans, to implement financing of the debts and other commercial transactions, factoring,

c) to provide guarantees,

d) to issue securities, as well as to implement transactions with securities at own its expense and

ե) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ.

զ) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում.

է) գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և մետաղադրամ.

ը) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).

թ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն.

ժա) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն.

ժբ) ԿԲ համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:

Ընկերության ֆինանսական գործառնություններից բացառություն են կազմում կանխիկ արտարժույթ գնել և վաճառելը, այդ թվում՝ դրամի և արտարժույթի ֆյուչերսների, օպցիոնների և նման այլ գործարքների կնքումը:

Ընկերությունը ֆինանսական գործառնությունները իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով:

2.3. Ֆինանսական գործառնություններից բացի Ընկերությունն իրավունք ունի իրականացնել վարկային կազմակերպությունների համար Օրենքով և ԿԲ նորմատիվ իրավական ակտերով չարգելված այլ գործունեություն:

on its behalf,

e) to provide payment services connected with the activity of credit organization,

f) to provide services of financial agent (representative), to administer the investments of other people, to implement entrusted management of property,

g) to purchase, to sell and to administer banking gold and standard bullions and coins,

h) to implement financial leasing,

i) to accept for storage precious metals, stones, jewelry, securities, documents and other valuables,

j) to provide financial consultation,

ja) to create and serve informative center of clients creditworthiness, to implements the activity of debt collection,

jb) to implement activities typical to credit organizations, accepted in the international practice with the consent of the CB.

The purchase and sale of the foreign currency, including conclusion of futures, options of dram and foreign currency, as well as other similar transactions are considered as exceptions from the financial operations of the Company.

The company carries out the financial operations exclusively in non-cash method.

2.3. Besides financial operations the Company is entitled to implement other activity not forbidden for the credit organizations by the Law and CB normative acts.

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

3.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է **300 000 000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ**, որը բաժանված է 30 000 (երեսուն հազար) հասարակ (սովորական) բաժնետոմսերի. մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ:

3.2. Կանոնադրական կապիտալը որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:

3.3. Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված են և պատկանում են Ընկերության միակ բաժնետիրոջը:

3. THE STATUTORY CAPITAL OF THE COMPANY

3.1. The statutory capital of the Company is **AMD 300 000 000 (three hundred million)** which is divided into 30 000 (thirty thousand) shares, the nominal value of each share is 10 000 (ten thousand) AMD.

3.2. The statutory capital defines the minimum amount of the Company property guaranteeing the creditors interests.

3.3. All shares of the company share capital are distributed, fully paid and owned by the sole

shareholder of the Company.

3.4. Ընկերության կանոնադրական կապիտալը կարող է փոփոխվել Կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.4. The statutory capital of the Company may be changed as established by Charter and RA legislation.

3.5. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն հինգ տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

3.5. A reserve fund shall be created in a Company, in the amount of 15 percent of equity. If the reserve fund is smaller than the size foreseen by the Charter, then allocations to this Fund shall be made in the amount of at least 5 percent of profit, as well as from the proceeds of the difference between the emission value of new shares and their nominal value.

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՎԱԴՐՈՒՄԸ

4. ALIENATION AND PLEDGE OF THE COMPANY SHARES

4.1. Բաժնետոմսի՝ երրորդ անձին վաճառքի դեպքում (բացառությամբ Ընկերության մյուս բաժնետիրոջը օտարելուն) Ընկերության բաժնետերերն ունեն նախապատվության իրավունք վաճառվող բաժնետոմսի նկատմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

4.1. In case of the sale of a share to a third party (other than a transfer to another shareholder) the shareholder of the Company have the right of first refusal to the share to be sold in accordance with RA legislation. The timeframe for exercising the right of first refusal is one month.

4.2.Եթե Ընկերության մեկից ավելի բաժնետերեր ցանկանում են օգտագործել իրենց նախապատվության իրավունքը, նրանցից յուրաքանչյուրը իրավունք կունենա գնել վաճառվող բաժնետոմսի մի մասը մինչև նախապատվության իր իրավունքից օգտվելն իրենց պատկանող քվեարկող բաժնետոմսերի քանակին համամասնորեն:

4.2. If more than one shareholder of the Company wishes to exercise the right of first refusal, then each such shareholder shall be entitled to purchase a portion of the offered amount commensurate to the quantity of voting shares they currently own

4.3. Նախապատվության իրավունքը կարող է միայն իրականացվել ամբողջ առաջարկվող բաժնետոմսերի նկատմամբ, այլ ոչ դրա մի մասի:

4.3. For avoidance of doubt, the right of first refusal can only be exercised in respect of the entire offered share and not in respect of a part of such share.

4.4. Բաժնետիրոջ կողմից Ընկերության իր բաժնետոմսը (կամ դրա մի մասը) թույլատրվում է փոխանցել (օտարել) երրորդ անձանց միայն բաժնետերերի Ժողովի համաձայնությամբ: Փոխանցման համաձայնության վերաբերյալ որոշումը կայացվում է ժողովին ներկա բաժնետերերի ձայների առնվազն երկու երրորդով:

4.4. A shareholder may transfer the share of the Company (or a part thereof) only with direct consent of the shareholders' Meeting. Resolution relating the transfer of a share is passed with the favorable vote of at least 2/3 of the votes of Company's shareholders represented at the Meeting.

4.5. Արգելվում է բաժնետիրոջ կողմից Ընկերության իր բաժնետոմսը գրավ դնելը՝ առանց Ժողովի համաձայնության: Գրավադրման համաձայնության վերաբերյալ որոշումը կայացվում է ժողովին ներկա

4.5. It is forbidden to pledge a Company share by the shareholder without the direct consent of the Meeting. Resolution relating to pledge of a share is passed with the favorable vote of at least 2/3 of the

Ընկերության բաժնետերերի ձայների առնվազն երկու երրորդով:

votes of Company shareholders represented at the Meeting.

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.

5. MANAGEMENT BODIES OF THE COMPANY

5.1. Ընկերության կառավարման մարմիններն են.
- Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով)
- Տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)
- Գլխավոր տնօրենը:

5.1. The management bodies of the Company are:
- Shareholder Meeting (hereinafter Meeting)
- Directors board (hereinafter Board)
- General Director.

ԺՈՂՈՎԸ

THE MEETING

5.2. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:
Ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ: Ժողովները հրավիրվում են խորհրդի կողմից:
Ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը սահմանում է Խորհուրդը:

5.2. The highest managing body of the Company is the Meeting, which has the rights of final settlement of any issue relating the management and the activity of the Company.
The Meeting may be ordinary or extraordinary. Meetings shall be called by the Board.
Procedure of preparation and holding of Meeting is defined by Board.

5.3. Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել հերթական Ժողով՝ Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատելու համար: Ժողովը հրավիրվում է Խորհրդի կողմից տարեկան մեկ անգամ ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:
Արտահերթ ժողովը գումարվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

5.3. The Company is obliged to convene ordinary Meeting every year for confirming the annual results of the Company activity. The ordinary Meeting is convened by the Board once in a year during six months after the end of financial year.

Special Meetings shall be held on the basis of a Board decision, either at its initiative or at the request of the executive body of the Company, the controls commission, the external auditor, or a shareholder of at least 10 percent of voting shares of the Company as of the date of filing such request.

5.4. Ժողովի նիստերը կարող են գումարվել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Ժողովի նիստերի մասնակիցները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցիչների միջոցով, որոնք պետք է ներկայացնեն գրավոր լիազորագիր կամ օրենքով սահմանված այլ փաստաթղթեր որոնք կհավաստեն իրենց լիազորությունը:
Ժողովի որոշումները կարող են կայացվել նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված հեռակա քվեարկության կարգով՝ սահմանած կարգին համապատասխան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.4. The Meeting sessions may be convened both in Armenia and abroad. The members of the Meeting may participate both in person and by the representatives who have to submit a power of attorney granted in writing or present current documents confirming authorization of such other representatives.
The decisions of Meeting may also be made in the order of absentee voting defined by the RA law "On the joint-stock companies" in accordance with the set order, except for cases stipulated by laws.

5.5. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե սույն օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

5.5. A Meeting is eligible (has quorum) if, at the time of completing registration of Meeting participants, the owners (or representatives of owners) of an aggregate of more than 50 percent of the Company's outstanding voting shares have registered.

Meeting decisions are adopted by a simple majority vote of all the owners of voting shares participating in the Meeting, unless a greater vote is required under this Law.

5.6. Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը.

ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը.

գ) Ընկերության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

5.6. The Meeting has a exclusive right to make decisions regarding:

a) approve the Charter, amendments and extensions thereto, and a new edition of the Charter;

b) reorganize the Company;

c) liquidate the Company;

d) approve the final, interim, and liquidation balance sheets, and appoint a liquidation commission;

e) determine how many members there shall be in the Board, select them, and implement early termination of their powers; the matters referred to in this subparagraph

f) define the maximum amount of announced shares;

g) increase Company equity by means of increasing the nominal value of shares or allocating additional shares;

h) reduce Company equity by means of lowering the nominal value of shares, reducing the total number of shares outstanding by the Company, or by means of redeeming outstanding shares acquired or bought back by the Company;

i) appoint the executive body (director, general director, executive board, management board) of

ԽՈՐՀՈՒՐԴԸ.

5.9. Ընկերության խորհուրդն իրականացնում է Ընկերության ընդհանուր ղեկավարումը՝ իր իրավասության սահմաններում և կարող է լուծել ցանկացած հարց, որը չի հանդիսանում Ժողովի բացառիկ իրավասությունը:

5.10. Ընկերության Խորհուրդը կազմված է երեք անդամից, որոնց լիազորությունների տևողությունը սահմանափակված չէ: Խորհրդի անդամները նշանակվում և ազատվում են Ժողովի կողմից: Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհրդի նախագահը կազմակերպում է Խորհրդի աշխատանքները և նախագահում է նիստերին:

5.11. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Նիստերը կարող են իրականացվել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Խորհդի անդամները նիստերին մասնակցում են անձամբ:

Խորհուրդն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների 2/3-ը:

Խորհրդի որոշումները ընդունվում են Խորհրդի

BOARD

5.9. The Board of the Company implements the general management of the Company within the scopes of its authorities and can settle any issue which is not in the exclusive authorities of the Meeting.

5.10. The Company Board is composed of three members, whose authorities term is not limited. The Board Chairman will be elected among the Board members by the Board members by the majority of their general votes number. The Board chairman will organize the Board works and preside the sessions.

5.11. The Board sessions are convened by the Board chairman by the initiative of the Chairman of the Board, at the request of a Board member, the Controls Commission, the Company's auditor, the executive body, or a shareholder of at least 10 percent of voting shares of the Company.

The sessions may be convened both in Armenia and abroad. The Board members participate in the sessions in person.

The board is competent in case in case the 2/3 of the members takes part in it.

օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաեւ Ընկերության բաժնետերերին, պարտատերերին եւ մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին եւ կանոնադրությանը համապատասխան:

ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄ

5.16. Օրենքով սահմանված խոշոր գործարքները կնքվում են Խորհրդի կամ Ժողովի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: Մասնավորապես, այն գործարքների մասին որոշումները, որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, պետք է ընդունվի խորհրդի կողմից միաձայն, իսկ 50 տոկոսից ավելին կազմելու դեպքում՝ ժողովի կողմից:

5.17. Օրենքով սահմանված շահագրգռվածության առկայությամբ գործարքները կնքվում են Խորհրդի որոշմամբ:

5.18. Բացի խոշոր և շահագրգռվածության առկայությամբ գործարքներից, բոլոր այն գործարքները կամ միմյանց հետ փոխկապակցված մի քանի գործարքները, որոնք Ընկերության համար կնքման պահից մեկ տարվա ընթացքում առաջացնում են 25 000 000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ (կամ համարժեք արտաժույթ ԿԲ փոխարժեքով) ավել ֆինանսական (դրամային) պարտավորություններ, կնքվում են Խորհրդի որոշմամբ (համաձայնությամբ):

the public administration bodies stipulated by laws and other legal acts, as well as the truthfulness of Company-related information provided to Company shareholders, creditors, and the mass media, as required by laws, other legal acts, and the Charter.

COMPANY TRANSACTIONS

5.16. The large transactions defined by law are concluded by the decision of the Board or Meeting as defined by law. Particularly, the decision on those transactions the price of which amounts to from 25 to 50 percent of the balance value of the Company assets as of the moment of making the decision on the transaction conclusion, should be made by the Board unanimously, and in case of exceeding 50 percent, the transaction concluded by the Meeting decision.

5.17.The transactions with the interest defined by law are concluded by the Board decision.

5.18. Besides the large transactions and transactions with interest, all those transactions or several interrelated transactions which arise financaial (monetary) obligations of more than 25 000 000 AMD (or equivalent foreign currency with CB exchange rate) for the Company within one year upon conclusion, are signed by the Board decision (agreement).

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ԵՎ ԱՈՒԴԻՏԸ

6.1. Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում ՀՀ օրենսդրության և ԿԲ կողմից սահմանված պահանջներին համապատասխան: Ընկերության հաշվապահական հաշվառումը վարում է գլխավոր հաշվապահը, ով իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներն ու պարտականությունները:

6. THE ACCOUNTINGS , REPORTS FINANCIAL CONTROL AND AUDIT OF THE COMPANY

6.1. The Company keeps the accounts in accordance with the requirements defined by the RA legislation and CB. The chief account is keeping accounts of the Company, who implements the rights and obligations defined by the RA law "On the Accounting".

6.2. Ընկերությունը կազմում և օրենքով սահմանված ժամկետներում հրապարակում է տարեկան ֆինանսական, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պարտադիր այլ հաշվետվություններ:

6.2. The Company prepares and publishes annual financial, as well as other obligatory reports defined by RA legislation and CB normative legal acts in the terms defined by law.

6.3. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի գործառույթները կատարում է վերստուգողը, ով նշանակվում է Ժողովի կողմից 3 (երեք) տարի ժամկետով: Ընկերության վերստուգողը իրականացնում է Ընկերության ֆինանսական գործունեության վերահսկումը, ներառյալ՝ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը:
Վերստուգողը ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) կամ գլխավոր տնօրենի պահանջով:

6.3. The functions of the Controls Commission is executed by the Controller, who shall be elected by the Meeting for three-year term. The Controller of the Company controls the financial activities of the Company, including inspects the results of the annual financial performance of the Company.
The Controller shall inspect the financial activities of the Company either at any time at its sole initiative, or based upon a decision of the Meeting or the Board, as well as at the request of the owner of at least 10 percent of the voting shares of the Company or General Director.

6.4. Յուրաքանչյուր տարի Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի, որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:

6.4. Each year an independent auditor having the rights to render audit services in the order defined by the laws and other legal acts is involved by the Company for the purpose of reviewing the financial-economic activity of the Company by signing an appropriate contract with that auditor.

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. FINAL PROVISIONS

7.1. Սույն կանոնադրությամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, Ընկերության ներքին իրավական ակտերով և Ժողովի որոշումներով:

7.1. The issues not regulated by this charter are regulated by the RA legislation, internal legal acts o the Company and the decisions of the Meeting.

7.2. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

7.2. The Company may be reorganized or liquidated in the cases and order defined by the RA legislation.

7.3. Սույն կանոնադրությունը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Հայերեն և անգլերեն տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

7.3. This charter is made in English and Armenian In case of discrepancy between the Armenian and English versions of the charter, the Armenian version shall prevail.